Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ բժշկական հանձնաժողովի
11/12/2013թ թիվ 1-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ բժշկական հանձնաժողովի նախագահ

_____Միհրան Հակոբյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«20» դեկտեմբերի 2013 թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-024

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ)

ԵՐԵՎԱՆ - 2013

Հ/հ	Տուժողի առողջությանը պատճառված վնասի տեսակը, որի գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր չէ արդյունավետ իրականացնել	Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բժշկական հաստատության անվանումը, որի կողմից համապատասխան վնասի գծով բժշկական օգնություն ցուցաբերվելու կամ առողջության վերականգնում իրականացվելու դիմաց տուժողն իրավունք ունի ստանալու օրենքով նախատեսված ապահովագրական հատուցում
1.	Բարակ աղիի տարածուն վնասում, ախտահարում կամ կորուստ, որն առաջացրել է բարակ աղիի փոխպատվաստման անհրաժեշտություն	1) Ռուսաստանի վիրաբուժության գիտական կենտրոն (Ռուսաստանի Դաշնություն, 119991, Մոսկվա, ԳՍՊ-1, Աբրիկովսկի նրբ., տ. 2, հեռ.՝ (7 495) 766-47-04; 246-89-88, ինտերնետային կայք՝ www.med.ru), 2) Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)
2.	Լյարդի վնասում, ախտահարում կամ կորուստ, որն առաջացրել է լյարդի մեծածավալ մասնահատման կամ փոխպատվաստման անհրաժեշտություն	1) Ռուսաստանի վիրաբուժության գիտական կենտրոն (Ռուսաստանի Դաշնություն, 119991, Մոսկվա, ԳՍՊ-1, Աբրիկովսկի նրբ., տ. 2, հեռ.՝ (7 495) 766-47-04; 246-89-88, ինտերնետային կայք՝ www.med.ru), 2) Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)
3.	Գլխի, պարանոցի, իրանի, ուսագոտու կամ վերին վերջույթի այրվածքներ, որոնց վերականգնողական բուժումը պահանջում է՝ 1) սպլինտներ՝ վերին վերջույթի համար կամ 2) ճնշող (կոմպրեսիոն) «հագուստ»՝ դեմքի, իրանի կամ վերին վերջույթի համար	Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)
4.	Մարմնի 50%-ի և ավելի խորը այրվածքներ (III և IV աստիճանի), որոնք պահանջում են ալլոտրանսպլանտացիայի իրականացում	Ա.Վ. Վիշնևսկու անվ. վիրաբուժության ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Բոլշայա Սերպուխովսկայա փող., տ. 27, հեռ.՝ (7 495) 236-72-90; 237-08-14, ինտերնետային կայք՝ www.vishnevskogo.ru)

5.	Ողնուղեղային վնասվածքներ, որոնց հետևանքով առաջացած քրոնիկական խիստ արտահայտված ցավային համախտանիշները պահանջում են ռադիոհաճախականային սարքի իմպլանտացիա	Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի Ն.Ն. Բուրդենկոյի անվան նեյրովիրաբուժության ԳՀԻ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 4-րդ Տվերսկայա-Յամսկայա փող., տ. 16, հեռ.՝ (7 495) 251-65-26, ինտերնետային կայք՝ www.nsi.ru)
6.	Գանգուղեղային և (կամ) ողնուղեղային վնասվածքի հետևանքով առաջացած շնչառության քրոնիկ խանգարումներ, որոնք պահանջում են դիաֆրագմալ նյարդը խթանող սարքի իմպլանտացիա	Մոտոլի համալսարանական հիվանդանոց (Չեխիայի Հանրապետություն, Պրահա 5, 15006, Վուվալու 84, հեռ.՝ (420 2) 431-111, ինտերնետային կայք՝ www.fnmotol.cz)
7.	Գանգի դիմային հատվածի ոսկրերի ու փափուկ հյուսվածքների տարածուն վնասվածքային դեֆեկտներ, որոնց վերականգնման համար պահանջվում է համակարգչային մոդելավորում	Ստոմատոլոգիայի և դիմածնոտային վիրաբուժության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Տիմուր Ֆրունզեի փող., տ. 16, հեռ.՝ (7 495) 246-1334, ինտերնետային կայք՝ www.cniis.ru)
8.	Սույն ցանկի 1-7-րդ կետերով չնախատեսված վնասներ, որոնց գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Բժշկական հանձնաժողովի որոշմամբ (հիմնված Հայաստանի Հանրապետության տարածքում գործող նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բժշկական հաստատության եզրակացության, պահանջվող այլ փաստաթղթերի և իրականացված հետազոտությունների վրա) հնարավոր չէ արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում	Բժշկական հանձնաժողովի որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բժշկական հաստատություն (հաստատություններ), որտեղ համապատասխան վնասի գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը կարող է արդյունավետ իրականացվել